



**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
«ԴՍՏԵՐՔ ՎԱՐԴԱՆԱՆՅ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԻՍՆԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԹՎ**

**«ԴՍՏԵՐՔ ՎԱՐԴԱՆԱՆՅ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱԻԱԳ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ
ԵՒ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԱՐԱԶԱՏ ԴՍՏԵՐԱՅ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ
ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ ՈՂԶՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**

Նիւ Եորք

Ջերմ ուրախութեամբ կ'ողջունենք ձեր եկեղեցաշէն ու բարեսիրական կապ-
մակերպութեան յիստն երկար տարիներու ժողովրդանուէր գործունէութիւնը,
յղելով ձեզի բոլորիդ Մեր հայրական սէրն ու գնահատանքը Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնէն:

Մեզի քաջ ծանօթ են ձեր ընդարձակ գործունէութիւնն ու ձեր կատարած
նիւթական բազում նուիրատուութիւնները ի պայծառութիւն եկեղեցիներուն և
կրթական հաստատութիւններուն հայ սփիռքի նարածքի վրայ:

Ձեր հայաշունչ կապմակերպութեան՝ «Դստերք Վարդանանց» անդամները
Մենք կը համարենք մեր առաքելական Եկեղեցիին հարապատ զաւակները:
Դուք բոլորդ ունիք միևնոյն ազնիւ նպատակը՝ միշտ հոգատար ըլլալու մեր
պանդուխտ ժողովուրդին, մեր Մայր Եկեղեցիին ու հայ դպրոցին:

Թող միշտ բարձր հնչէ ձեր ազգանուէր կապմակերպութեան անունը: Թող
Վարդանանց դրօշը միշտ ազատ ու հպարտ ծածանի ամենուրեք, և Սուրբ Վար-
դանի յիշատակը յաւետ մնայ անթառամ:

Սրտանց գնահատելով ձեր հոգեշէն ծառայութիւնները և ընդառաջելով
Հիւսիսային Ամերիկայի արևելեան թեմիդ բարեջան առաջնորդ՝ Գերաշնորհ Տ.



Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեան, սոյն Մեր կոնդակաւ կը յղենք ձեզի բոլորիդ, ձեր կապակերպութեան Միացեալ Նահանգներու և Գանատայի 24 օթեակներու բոլոր անդամներուն, Մեր հայրապետական քաջաւերանքը և օրհնութիւնները, մաղթելով ամենուդ անսպառ եռանդ, յարատեւութեան ոգի և ձեր բարի գործոց լիակատար յաջողութիւն:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, վօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13—15): Ամէն:

Հայր Սե Դ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ կոնդակս ի 12 Ապրիլի
1983 Փրկչական աւի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԲ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1186

